Թ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 25 ՕԳՈՍՏՈՍ 1906 — ԹԻՒ 840

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 «
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տոլ.
վեցամսեայ 1.50 «

Ծանուցմանց տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է։ Երեքից աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

—o—

Վարձայի համար ձեռքի 10 սանթիմ է

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Դարձակ եւ ղրամ ղրկել խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
„Charjoum"
Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքի
15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքի
20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԼՏԲ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բը բոշիւրը յանձնված է տպագրութեան։

Բրոշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսած է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց։ Բնական է որ բրոշիւրի մէջ փաստող գոկիմանները մեծ տեղ պիտի գրաւեն։

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու։ իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր։

Դիմել «Շարժումի» խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժոզէֆ քարափին վրայ։ կըստանայ զանազան հայերէն թերթեր։ Առ հասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն։ Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները։

Ցառաջիկայ Սեպտ։ 1ին կրսկսի Ամիրխանեանց երկսեռ վարժարանին 2րդ. տարեշրջանը։ Ընդունելութեան եւ այլն պայմանական քննութիւններ կըսկսին Օգոստոս 20ին։

ԳԼԽԱՒՈՐ ԵՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆԵՐԸ

—:—

Նախորդ յօդուածով ասացինք որ երկրի գործիչները, մանաւանդ տաճկահայ ինտէլիգէնտ գործիչները անպատճառ պէտք է ընդհանուր ժողովում ներկայ լինեն։ Լաւ, գտնվելուց յետոյ ինչ պահանջներ պէտք է դնել որ Դաշնակցութիւնը վերանորոգվի և յառաջադրած նպատակին յաջողութեամբ ծառայէ։

Առաջի նիստում ժողովի պէտք է դնել անձնազոհութեան ցենզի պահանջը...այսինքն ոչ մի դաշնակցական իրաւունք չունի քուէարկու լինել ընդհանուր ժողովում, եթէ նա պատրաստ չէ յեղափոխութեան մասնակցել գործնական կերպով և երկրի մէջ։ Այդպիսով հէնց առաջին նիստում սիրողները կը մաքրվեն։

Երկրորդ պահանջ. ջնջում բիւրօների ձայնի և ամբողջ բիւրօների։

Երրորդ պահանջ. արտասահմանեան մարմինները ընդունել ոչ իբր յեղափոխական մարմիններ, այլ իբր օժանդակ, նրանց պատգամաւորներին ձայն տալ միայն իրենց տեղական խնդիրների մասին և չը թոյլատրել ներկայ լինելու զուտ գործնական յեղափոխական խնդիրների ծեծվելուն։

Չորրորդ պահանջ. կոչմակերպութեան համար կամ անպայման կեդրոնացում և կամ թէ անպայման ապակեդրոնացում։

Հինգերորդ պահանջ։ Դրօշակի խմբագրութիւնը ընդունել լոկ իբր խմբագրութիւն և նրա վարողները իբրեւ վարձկան ծառայողներ՝ ուրիշ ոչ ինչ։

Վեցերորդ պահանջ. արտասահմանեան մարմինների վրայ հսկողները լինեն երկրի մարմինները, իրենց ընտրած վերատեսուչներով։

Եօթերորդ պահանջ. յստակ օրէն որոշել Դաշնակցութեան դերը Կովկասում և Մաճկաստանում։

Ութերորդ պահանջ. արտասահմանեան մարմիններին դրկել տեռորի որոշում տալու իրաւունքից։

Իմ կարծիքով և հաւատքով, նոյն իսկ աշխարհիս բոլոր յեղափոխականների հասկացողութեամբ այս պահանջներին գոհացում տալով է միայն որ Դաշնակցութիւն կը դառնայ իրօք մի յեղափոխական կազմակերպութիւն, գործը կանցնի երկրի գործիչների և յեղափոխական տարրի ձեռքը, կը վտարվեն փառասէր սիրողները. վերջ կըստանան եղբայրասպանութիւնները, որոնք միայն արտասահմանում երկրից դուրս են տեղի ունենում սիրող վարիչների հրամաններով, յեղափոխութեան անունով հաւաքված դրամները իրօք երկիր մտնելով յեղափոխական գործին կը ծառայեն, և վերջապէս երկրումն է շարժում տեղի կունենայ իրենց երկրում գտնվող և գործող յեղափոխական տարրերի որոշմամբ։

15 տարի է որ գոյութիւն ունի Դաշնակցութիւնը. նրա կատարած գործերից մէկ երկուսը հազիւ են կատարվել երկրի յեղափոխական տարրի որոշմամբ... Նրանում չէ ընդունված անպայմանօրէն անձնազոհութեան ցենզը, որը կատարեալ խայտառակութիւն է մի յեղափոխական կազմակերպութեան համար. երկրից դուրս տեղի ունեցած սպանութիւնները կատարվել են առանց երկրի մարմինների գիտակցութեան; Դաշնակցութիւնը եղել է մի խառնուրդ կեդրոնացման և ապակեդրոնացման, Դաշնակցութեան եկամուտների մի տասերորդ մասը իսկ չէ ծախվել երկրի մէջ, զուտ ապստամբական գործի համար, և սրա միակ պատճառը այն է որ մեր վերը դրած պահանջները զուտ յեղափոխական մտքով դրական լուծում չեն ստացել...երկրի գործերը և սմբողջ յեղափոխական գործը տարվել է սիրողների, երկրի պայմաններին, պահանջներին անծանօթ մարդկանց ձեռքով, թելադրութեամբ, որոնց յեղափոխական ամբողջ հաւատամքը կայանում է սրանում. փոքրիկ թռուցիկ գործեր կատարել տալ, սուտ ոգեւորված ճառեր արտասանել միամիտներին շլացնելու համար, ճառեր գրել թերթերում, դիմել եւրոպացիներին սգստութիւն և դրամ մուրալ... Վերջապէս ժամանակ է վերջ տալու այս դրութեանը... ժամանակ է երկրի ճակատագիրը յանձնել երկրացի յեղափոխական տարրին, ժամանակ է յեղափոխութեան անունով կաժվին և սպանութեամբ ստացված զումարները ծախսել երկրում, ժամանակ է վերջ տալ բերանացի և գրաւոր ճառերին, ժամանակ է վերջ տալ յեղափոխական տիտղոսով հացկատակութեան... Եւ այդ կարող են անել միայն երկրի գործիչները...

ՎԱՐՈ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ՍԷՋՊՍՐԼԱՍԵՆՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՍՈՒՋԵՒ

Մեր ըսրեկամիտ՝ ոչ մի խումբ աչակցուած այլ հայասէրներու կողմէն, յուլիս 25 ի Նիստին մէջ, Ժորժ Լօրանի միջոցով, Վերտաենի պատգամաւոր, ներկայացուց, ոչ առանց դժուարութեան, հայկական հարցը։

Անաւասիկ արտասանած ճառը։

Ժ. Լ օ ր ա ն—«Դիտեմ. որ ժողովի կանոնագրութիւնը հասկանալի խոհեմութեան նպատակով մը. կարգիլէ ժողովի առաջ բերել քաղաքական ներքին եւ այժմէական հարցերը։ Բայց չեմ կարծեր այս կանոնի դէմ չարժած լինել՝ հրաւիրելով ձեր եւ մեր Մշտական Խորհրդին ուշադրութիւնը միջազգային մի քանի դաշնագիրներուն յայտնի գործադրութեանը վրայ, նոյնիսկ այնպիսի դաշնագիրներու, որոնք բոլոր պետութիւններու ստորագրութիւնը կը կրեն եւ կը կանոնաւորեն, հասարակաց շահերու համար, եւրոպական հարցերը։

«Խնդիրը յատկապէս կը վերաբերի Բերլինի դաշնագրութեան բացայայտ տրամադրութիւններուն, որոնք օսմանեան կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդներուն երաշխաւորած են օրինաւոր բէժիմ մը, որը կարողանայ անոնց ապահովել կարգի կանոնի, անդորրութեան եւ արդարութեան նւազագոյն չափը, որու չգոյութեան

պարագային մարդ բարբարոսութեան վիճակին մէջ կ՚ապրի; Արդ ամէն ոք զիտէ եւ ես այս մասին պնդելու պարտքը չեմ զգար. որ Թիւրքիոյ քրիստոնեայ ժողովուրդները, որոնք միջազգային օրէնքներու առարկայ դարձած են չեն վայելեր, ինչպէս նաեւ մահմեդական ազգարնակութիւնը, քաղաքակիրթ կեանքի տարրական պայմանները եւ յանձնուած են, մասնաւորապէս հայ ժողովուրդը ամենահոգեւոր կամայականութեան եւ ամենայոռի անապահովութեան բէժիմին։ Նոյնն է Մակեդոնիոյ մէջ։

«Այս արիւնոտ նահանջներու դէպքերու պատկերը չպիտի գծեմ. Դուք զանոնք կը ճանչնաք եւ տեղն ալ չէ։ Բայց ինձ կը թւի, որ հանդիսաւոր դաշնագրերու յայտնի անգործադրութիւնը պիտի դառնայ ձեր գործունէութեան առարկայ։

«Պարտաւոր ենք պահանջելու, որ դաշնագրերը գործադրեն։ Եթէ ոչ զանոնք կնքելէ ի՞նչ օգուտ։ ի՞նչ բանի կը ծառայեն մեր բոլոր ըրածները եւ հասարակութիւնը ի՞նչ վստահութիւն կրնայ ունենալ մեր ջանքերու վրայ։ Արդ, փոյթառութիւնը կապացուցանէ, որ եթէ որոշ երկիրներու՝ մանաւանդ Թիւրքիոյ հետ դաշնագրերու գործադրութիւնը բռնի ոյժով չպահանջի, անոնք կը մնան առանց գործադրութեան; Այսպէս Բէլգիան եւ Սմերիկան օսմանեան կառավարութեան հետ այս պահուս վէճ մը ունին, որու համար չեն կարող ոչ մէկ զոհացուցմամբ, որովհետեւ գիտեն որ մէկը չը կրնար, իսկ միւսը չուզեր զինու զօրութեան դիմել։ Այդպիսի կացութիւն մը պէտք է որ ձեր ուշադրութիւնը գրաւէ։

«Ծկարներն եւ խաղաղասէրները զոհւելու չեն Հանդիսաւոր դաշնագրերը Բէլգիայի եւ Սմերիկայի կ՚երաշխաւորեն իր քաղաքացիները դատելու իրաւունքը, որոնք Թիւրքիոյ մէջ յանցապարտ կը նկատուին։ Արդ բելգիական հպատակ մը եւ ամերիկեան քաղաքացի մը, հակառակ դաշնագրերու, այս պահուս մահուան դատապարտած եւ բանտարկուած կը մնան եւ իզուր բելգիական կառավարութիւնը Թիւրքիայէն պահանջեց, որ այս հարցը ենթարկեն Լահէյի ատեանին իրաւարարութեան, որուն իրաւասութեան կը պատկանի իրաւունքը։ Մեզ պատասխանեցին, որ եթէ Թիւրքիան Լահէյի ժողովին մասնակցի, դաշնագիրը որուն պիտի յանգի ժողովը, չպիտի վաւերացուի սուլթանին կողմէ, եւ մեր իրաւունքը, գուրկ ոյժի նեիրագործումէն, կը մնայ մեռած տառ։ բայց նոյն իսկ այս կարգի դժարութիւններու վերջ տալու համար է որ Լահէյի ատեանը կազմուեցաւ։

Նախագահը.— Չեմ կրնար թոյլ տալ յարգելի բարեկամիս որ հակառակ մեր կանոնի, այս հարցի մասին շարունակէ խօսիլ։

Ժ. Լօրան.—«Կը կարծէի որ իմ առաջարկս—միջազգային դաշնագրերու անգործադրութեան հարցը ենթարկել մշտական խորհրդի ուսումնասիրութեան—մեր ներքին կանոնագրին բնաւ հակառակ չէ. Պարոն. ներ զ՚Էսուլինէլ կը կոնստանի. Ճ. Ուիլսընի եւ Ու. Ժ. Բրիանէ հետ պատիւ ունիս խնդրելու, որ խորհուրդը յառաջիկայ նիստի համար բարեհաճի ուսումնասիրել դաշնագրերու անգործադրութեան այդ ծանրակշիռ հարցը, մասնաւորապէս Բերլինի Դաշնագրի հարցը. որ Սուլթանեան կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդներուն, քաղաքակիթուած լեժիմի հանդիսաւոր երաշխաւորութիւնը տուած էր Եւրոպայի անունով։ Հայերը ինձ խնդրած են, որ մինչեւ հոս լսել տամ իրենց վշտի աղաղակը եւ օրինական բողոքը՝ անհաւասարութեան եւ կամայականութեան բեժիմի դէմ, որը շարունակել՝ կը նշանակէ բռնարարել դաշնագիր մը, որ կը կրէ սուլթանի եւ բոլոր մեծ պետութիւններու ստորագրութիւնը։

Առաջարկը միաձայն ընդունուեցաւ։ Խորհուրդը միջոցներ ձեռք պիտի առնէ՝ հայկական խնդիրը Լահէյի ժողովին ներկայացնելու։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոս 25ին, «Դրօշակի» խմբագրութիւնը յանուն Հ. Յ. Դաշնակցութեան, ուղարկեց Փրանսիայի, Անգլիայի, Իտալիայի և Միացեալ-Նահանգների արտաքին գործերի մինիստրութիւններին մի դիմում՝ հայկական խնդիրը Լահէյի ժողովին ներկայացնելու համար։ Այդ դիմումը կցած է մի դոսսիէ, բաղկացած 14 մեծագիր երեսներից, ուր ցուցակագրած են Թիւրքաց Հայաստանում կատարուած բռնութիւնները, սկսած 1906 թուի յունուարի 1ից մինչեւ յուլիս 1ը։

— —

Թիֆլիսում կառավարութեան կարգադրութեամբ դադարեցրուած են հայոց և վրաց մի քանի լրագիրներ, և ի միջի այլոց «Ալիքը»։

«ԴՐՕՇԱԿ»

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԱՆՀԱՍԿԱՑՈՂ ԳԼԻԽՆԵՐԸ

Այսչափ երկար պայքար մը մղել կազմակերպութեան մը դէմ, այն էլ յեղ. կազմակերպութեան, ցոյց տալով նրան իր ահագին սխալները որը եթէ շարունակելու լինի կորստեան դուռը հասնելը յայտնի և որոշ է. ու այդ կազմակերպութեան չի հասկնալը իր դէմ մղուած պայքարը ինքնին կուզայ հաստատել թէ դաշնակցականները անհասկացող գլուխներ շատ ունին։

Եթէ պայքարը մղէր անուղղակի կերպով մի անհատի շուրջը անհատը կզգար իւր սխալը եւ կը հետեւէր մի աւելի օգտակար ուղղութեան արատից ազատելու համար։

Իսկ դաշնակցական ինտելիգենտ կոչուող լաքէները այս պայքարին առջի կը լռեն ու կը լռեն. կամ աւելին, պայքարին պատճառներու իրականութիւնը կընդունին. բայց ճակատարաց առպարզ չեն կրնար գալ, դոնէ ինքզինքին պաշտպանելու։

Այս եթէ այդ պայքարը ըլլար դաշնակցութիւնը տապալելու, հիլիսյատակ ընելու նպատակով. և պայքարը մղող էլ լինէր Պիսնեանի—կամ նրա նման մի հացկատակ, մենք իհարկէ կը բռնէինք մի աւելի տարբեր դիրք եւ կարծիք դէպի պայքարը։

Բարեբախտաբար պայքարը ոտեղծողը եղաւ մի այնպիսի փորձառու գործիչ որը ամբողջ տասնեակ տարիներ հայ յեղափոխական կեանքի մէջ գործել է և շատ թէ քիչ իր օգտակարութիւնը ունեցել է։

Եւ այս անգամ էլ պայքարը սկսեց մի այնպիսի վեհանձ քայլով, որ եթէ չեմ սխալուում կրնամ ըսել թէ մինչեւ ցարդ չէր տեսնուած այսպիսի մի պայքարիչ. խօսքս Վ. Վարդօյի պայքարին մասին է։

Նախ որ Վարդօն ունեցել է իր ներքին պայքարը ամբողջ տարիներ շարունակ, հայ ժողովրդին. յոյսը յեղափոխութիւնից չի կարելու նպատակաւ (աչքի առաջ ունենալով ուրիշ կուսակցութիւնների անցեալի բաժանումը և հետեւանքը) դրա համար հրապարակաւ չէ ուզեր պայքարել. իսկ երբ տեսաւ որ ներքուստ չի պիտի կարողանայ հասկացնել այն սխալ դրութիւնը անհասկացող գլուխներին, թերեւս մկրտութիւն էլ տեղի ունենար. հրապարակ ելաւ պայքարի. իր համբերութեան բաժակը լեցուած սեպելով։

Երկրորդ Վարդօն չի ուզեր որ ինքնին կազմէ մի ուրիշ կուսակցութիւն եւ ինքը լինի ղեկավարող. ո՛չ, այլ Վարդօն կուզէ Դաշնակցութեան մէջէն վտարել տալ Ֆրանկի, բուպլիի և տալարի համար յեղափոխական կամ աւելին դաշնակցական եղողները, որոնք ապրելու միջոց են դարձրել յեղափոխութեան սուրբ անունը. մէկ խօսքով Վարդօն կուզէ Պետոնների, Բարկէնների սուրբ արիւնով ներկուած Դաշնակցութիւնը ազատել իր

ԿՈՎԿԱՍԻ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ(*)

«Մուրճում Անկախի յօդուածները, ինչպէս երեւում է, բաւական գրգռել են մեր «ազգային կառավարութեան» չէֆերին, որոնց կատաղութիւնը, մանաւանդ «Ալիքի» ղեկավարները անունով մեր յօդուածից յետոյ «Մշակ»ում հասել է նոր բլիսուիթրա բորբոքման։ Հայհոյանքի, սպառնալիքների, պրովոկատորական ստերի տարափի հետ «Ալիքի» ղեկավարները ինչ որ ակնարկներով ուզում են հաւատացնել խուժանին թէ ես «երբեմն թունդ դաշնակցականս յաճախ՝ փոխում եմ ուղղութիւնս եւ համոզմունքներս»։ Ով հետեւել է իմ գրածներին եւ անցեալ հասարակական գործունէութեանս՝ հաշիւ թէ հաւատ ընծայի «ալիքական» այդ նոր մոնեսվրներին, բայց եւ այնպէս թող ներեն ինձ մի քանի խօսք ասել «բրս տոմսիաս».

Աստիճանական զարգացումը—էվոլիւցիան—տիեզերական օրէնք է։ Եւ մենք հակասութիւն չենք համարում այդ օրէնքին, եթէ սաղմից աճելով զարգանում է մի էակ—յատուկ այդ սաղմին։ Եթէ կաղնու փոքրիկ սերմից աճում է մի հսկայ կաղնի ծառ—այդ բանի մէջ իրաքանչիւրը տեսնում է մի բնական երեւոյթի նորմալ արտայայտութիւն։ Հրաչք կը լինէր եթէ կաղնու սերմից դուրս գար, օրինակ, մի փուչ։

Արդ, եթէ մենք մի անհատի համոզմունքի եւ ուղղութեան մասին ենք խօսում, պէտք է միշտ տարբերենք ընդհանուր աշխարհայեացքի բնոյթը, յապիթիսը, մանրամասնութիւններից, որոնք հետեւանք են մի գաղափարի լոգիկական զարգացման, հասկացողութիւնների խորացման։ Եթէ ուզում ենք մէկին ապացուցել որ նա, օրինակ, թողել է արմատական-պրոգրեսիւ ուղղութիւնը, պէտք է ցոյց տանք թէ նա հակառակ ընթացք է բռնել ռէակցիոն, յետադէմ ուղղութեան է հետեւում, որովհետեւ արմատական պրոգրեսսիւ ուղղութեան մէջ դէպի ձախ թեքումը՝ առաջխաղացում է եւ ոչ յետադիմացութեան։ Իմ յիշողութեան մէջ ես չեմ գտնում ոեւէ հարց, որի նկատմամբ իմ աշխարհայեացքի ընդհանուր հիմքը, յապիթիսը, պրոգրեսիւ—արմատականութեան տարամերժ ընթացք ստացած լինէր։

Վերցնենք Թիւրքահայկական հարցը եւ իմ «էդիքեմն թունդ դաշնակցական» լինելուս խնդիրը։

Անշուշտ աշակերտական-պատանեկան շրջանի մասին չէ խօսքս, երբ քնական էր ենթարկուել այն ազգային բոմանթիզմի ազդեցութեան, որի մասին գրել է պ. Անկախը։ Վերցնում եմ ուսանողական կեանքս վերջին տարիները, երբ 1888ի Մոսկուայում կազմակերպուեց մի փոքրիկ ընկերութիւն, որ նպատակ էր դրել բազմակողմանի ուսումնասիրութեան ենթարկել Թիւրքաց Հայաստանը, նախ քան որ եւ է քաղաքական ձեռնարկութիւն սկսելը այն տեղ։ Ուսանողական նստարանը թողնելու պէս, ես փորձեցի այդ նպատակը իրագործել եւ եթէ ցանկացած ձեւով չյաջողուեց—դա իմ անհատական ջանքերից դուրս էր (տես իմ «Այց Թիւրքաց Հայաստանին»)։ Այդ ուսումնասիրական-նախապատրաստական ուղղութիւնը, դրական բէջ տակտիկայի կողմնակցութիւնը չթողեց ինձ եւ այն ժամանակ, երբ կազմակերպուեց «Դաշնակցութիւնը» (կենտրոնում 189) թւականներին տիրում էին երկու հոսանք, մէկը ուզում էր, նախ քան ոեէ ազգրեսիւ գործունէութեան դիմելը Թիւրքաց Հայաստանում, բազմակողմանի ուսումնասիրել այդ թերրա էնկոգնիթա-ի բոլոր առանձնայատուկ պայմանները եւ առ այժմ պասսիւ-ինքնապաշտպանական տակտիկայի հետեւել։ Եւ պէտք է ասել որ առաջին տարիներում անագին նախապատրաստական գործեր էին արուած այդ ուղղութեամբ։

Միւս հոսանքը, հմայուած ռուս նարոդովոլցիների եւ բուլղարական «հայդուկների» օրինակով, ծաղրում էր ուսումնասիրութիւնն էլ, նախապատրաստութիւններն էլ, առանձնայատուկ պայմաններն էլ եւ գըտ-

անկումից. եւ գործը յանձնուի այնպիսի փորձառու եւ անկեղծ գործիչների որոնք կարենան Դաշնակցութիւնը իրեն բարձրութեան վրայ պահել եւ այն ոյժերը գործածեն ի նպաստ հայ ազատագրութեան գործին. եւ ոչ թէ իրենց գրպանների և քմահաճոյքների համար:

Ահա Վարդոյին պայքարի ամբողջ միտքը դէպի դաշնակցութիւնը։

Մենք որ չատ թէ քիչ հասկացել ենք Վարդոյի պայքարի միտքը. ամբողջովին իրական պահանջներ կը տեսնեմք։

Իսկ եթէ դաշնակցութիւնը ուրիշ կերպ է հասկացել դա էլ իրենց անհասկացող գլուխներից է. երբ այս պէս կամ այնպէս հապա ինչո՞ւ—դաշնակցական կոչուած լաքէները հրապարակ չէն իջներ և տար մի համապատասխան կամ որոշ գաղափար պայքարի մասին։

Զէ՞ որ այդ լռութիւնը ինքնին կուգայ հաստատել թէ Դաշնակցութիւնը սբէրացիայի պէտքը ունի. և առաջին օբէրացիան ընողը եղաւ հէնց ինքը Վարդոն։

Ուրեմն Վարդոյի պայքարը ոչ թէ քննադատելի է այլ ընդհանուրը բոլորովին համապատասխան հայկական դատին եւ Դաշնակցութեան երկարատեւ կեանք ունենալուն միջոց մը։

Եթէ կան կարգ մը տիպեր որ այդ պայքարը անտեղի են նկատում, դա բացարձակապէս կուգայ հաստատելու թէ այդպիսիներն են Պիօնեանների նմաններ որոնք իրենց իւղոտ պատառից չի զրկուելու համար է որ անտեղի նկատելով մէկտեղ ունեցան նաեւ քաջութիւն նոյն իսկ պայքարին սկսողը ՄԿՐՏՉԼՈՒ.. ո՛վ հեգնութիւն. ի՞նչ պիտի ըսես այն արարածներին որոնք հացի համար եղբօր արիւնը թափելու վատութիւնը կընդունին։ Մենք որ կը ցաւինք, դա միսիայն նրա համար է որ ժողովրդին սանթիմներով ապրող այդ սողունները այնչափ անսանձ կերպով առաջ կը գնան, որ քաջութիւն կունենան նոյն իսկ Վարդոյէն 12 հազար ֆրանկը պահանջել. (կարծես թէ դրանք Վարդոյից աւելի վստահելի են.) որպէս թէ պէտքութիւնը կը զգացուի երկրին այս կամ այն կողմերը։

Դաշնակցական հացկատակ լաքէների այս աչքկապուկ մեթոտին հաւատացողներն էլ կը կարծեն թէ՝ պահանջը արդարացի է և իրականապէս պէտք կզգացուի երկրի մասին. ընդհակառակը այդ դրամի պէտքութիւնները կզգան Պիօնեանների Վրոամեանների նմանները իրենց հայրերի մայրերի և իրենց համար. գո՞ւն ես ըսողներու ու իրանց ետեւէն քարշ տուող ընկերներին բաժին հանելու համար. իհարկէ եթէ անոնց էլ բաժին չի հանեն վերջէն իրարու քիթ պիտի խածնեն. եթէ դաշնակցական ոյժերէն կէսին կէսը (քառորդը) երկրի պէտքութեան յատկացէր առանց սխալելու կրնամ ըսել թէ այսօր կազմուած հայդուկային խմբերու թիւը հարիւրների պիտի հասնէր։ Ո՞ւր են այնչափ դրամները որ յեղափոխութեան անունով հաւաքեցիք. դա՞՛ւք դո՛ւք...։ Եւ եթէ իրենց դաշնակցական լաքէների այս կամ այն արտաքին ու անտեղի ծախսերը—(որոնց մասին «Շարժումում» չատ խօսուած է) եթէ թուրք պաշտօնեաներին խոստացուելը աւելի մեծ դիւրութիւններ կունենայինք յեղ. գործունէութեան աւպալէզը անցընելու ծանկասանում. մենք որ լաւ գիտենք թէ դրամը ինչ անգին հրաշքներ գործել կուտայ հէնց թուրք պաշտօնեաների ձեռքով. ուստի պէտք է անպայման կերպով ընդունինք նաեւ սպասակարութիւնը։

Ուստի դաշնակցական գիտակից համակիրներին կը մնայ մեծ պարտականութիւնը կատարել. եթէ կուզեն դաշնակցութիւնը իր բարձրութեան վրայ պահեն մէկ խօսքով եթէ կուզեն չի դաւաճանեն Պետոնեարի. Բաբկէնների ալիւնին դէմ. պէտք է անպայման կերպով ընտրեն պատշաւաւորներ. իհարկէ գիտակից ու անկեղծ տարրից եւ ընդհանուր ժողովին վայրը հասցնեն ուրտեղ ոյժ տալով սկսած պայքարին կարենան հացկատակները մէկ խօսքով մեծ ու պզտիկ Պիօնեաններ դուրս վտարեն Դաշնակցութեան շարքերից։

Եւ նրանց տեղ դնեն փորձառու ազնիւ անկեղծ գործիչները որով ազատած պիտի ըլլան թէ իրենց և թէ կուսակցութեան վարկը. մենք հաստատ համոզուած ենք որ եթէ պատգամաւորական ժողովում դաշնակցական դատաւորները անկեղծորէն դատեն Վարդոյին ըրած պայքարը յարմար սեպելով մէկտեղ պիտի դնեն փոյձառուներու շարքին մէջ. իսկ եթէ բոլոր պատգամաւորները ըլլան Պիօնեանի նմանները, պիտի ցաւինք որ դաշնակցական անհասկացող գլուխները. գիտակցութիւնից բոլորովին զուրկ տարրեր են։ ցաւալի և չատ ցաւալի պիտի ըլլայ որ այսչափ երկար պայքարից յետոյ Դաշնակցական կուսակցութիւնը դալձեալ մենաբոլշիներուն ձեռքը մնայ։

Այն ժամանակ չեմք գիտեր թէ չատ թէ քիչ գիտակից դաշնակցականները ի՞նչ դիրք պիտի բռնեն, մենաբոլշի դաշնակցականների հանդէպ։

Բացատրութիւն մը ուզելը կարժէ։

ԺԱԳ

ՍՕՖԻԱ, 20 Օգոստ. 1906

ԼՈՒՍՆԱԿԻՆ ՎՐԱՑԷՆ

——

Հայերուս մէջ սովորական երեւոյթ մըն է երբ որ մէկը ուրիշ հայաբնակ վայր մը գայ անծանօթ տեղական հասարակական գործերուն հնութիւն մը իբրեւ Գոլոմբոսեան նոր գիւտ մը կուզէ հռչակել։ Վերջերս «Ռազմիկ»ը իր Ռաշիտով և խմբագիրով միասին պուլկարահայերուս հինցած բան մը իբրեւ նոր ծրագիր հռչակեցին։ Խնդիրը կը վերաբերի Պուլկարիոյ առաջնորդութեան և պատրիարքարանի թեւարկութենէն դուրս ելլալու խնդրին։ Դուն կաս միայն երու. եւ երբէք չեմ քաջեր բոլոր ժողովներում խօսել այդ չէֆերի դէմ։

——

Դանք սոցիալիզմին։ Ես մինչ ե դել եմ արմատական – պրոգրեսիստ սոցիալիստական գունաւորմամբ. իմ պայքարը կղերական բիւրոկրատիայի դէմ դպրոցական սպարէզում եւ իմ հրապարակախօսական գործունէութիւնը յիշած ուղղութիւնից (թէ չեղել են այդ եղել է միմիայն դէպի ձախ։ Ինչ, դրական պայմանները ինձ համար միշտ դերակշռող են եղել եւ իբրեւ դոկտրինեոյութեան թշնամի եւ էվոլիւցիոնիստ, մեր հայկական կեանքում քննադատաբար վերաբերելով դէպի երեւոյթները չեմ կարողացել ամբողջապէս բաժանել այս կամ այն աղանդաւոր աշխարհայեացքը։ Իրականութիւն եւ ոչ ֆրազներ եւ միմիայն գիտութեան ու արդարութեան դիկտատուրա։—ահա իմ լոզունգը։

Անցեալ տարի թիւ 11-12 «Մուրճում», բլօ դօսօ սիւա յօդուածում, ես պարզեցի ընդհանուր գծերով իմ ուղղութիւնը։ Զանազան առիթներով եւս արտայայտել եմ Կովկասեան սոցիալ դեմոկրատների վերաբերմամբ. եւ միայն անբարեխիղճ մանեւվրիստը չի կարող համոզել որ համակրելով սոցիալ դեմոկրատներին ես չեմ բաժանել որոշ դէպքերում նրանց հայեացքները եւ տակտիկան Բազմաթիւ դէպքերում ես բաժանել եմ Պլեխանովի հայեացքները. որոնց դէմ են եղել ռուսական սոցիալ դեմոկրատների աւելի ծայրայեղները եւ բլանկիստական հովերով բռնուածները. եւ եթէ այնու ամենայնիւ ես ինձ օրթոդոքս սոցիալ դեմոկրատ չեմ համարում եւ աւելի մօտ. եմ լեվ/զիոնիստներին (Բեռնշտէյնիզմին) դրա պատճառը պարզ է. իբրեւ էվոլիւցիոնիստ ես չեմ կարող բնութեան մէջ, որի մի մասն է եւ մարդկութիւնը, ընդունել յանկարծակի կատաստրոֆների թէորիան. յեղափոխութիւնը, ինչպէս ծնունդը, ինչպէս երկրաշարժը, էվոլիւցիոնական պրոցեսների վերջին ակտն է եւ արհեստական միջոցներով ապուշութիւն է առաջ բերել յեղափոխութիւն։ Իբրեւ գիտական մեթոդի ջատագով ես չեմ կարող ոեւէ դոգմատիզմ ընդունել։ Իբրեւ արդասաղէմ. ճիշտ լսելու տեղն է. միթինգները արդէն եղած, թաղականութիւնների համաձայնութիւնը արդէն առնուած, Կաթուղիկոսին արդէն դիմուած, «Ռազմիկ»ի գոյութենէն դեռ առաջ, եկեր են մեզի իբր թէ նոր առաջարկ մը ընելու մեր ցաւերուն դարմանը տանելու համար..... Եւ որչափ մանկական ձեւով կը վճռուի այդ թէեւ պզտիկ բայց չատ բարդ խնդիրը։ Պատուիրակ ընորեն։ զրկենք Կովկասի համագումարին, կաթողիկոսին առաջակենք. իսկ պուլկար կառավարութիւնը ո՞ւր մնաց. դիմելու ամենէն կարեւոր տեղը մոռցուած է... Կաթողիկոսը ամեն օր համաձայն է մարդ մը զրկել հոն, մէկ երկու անգամ ալ զրկած է, սակայն պուլկար կառավարութիւնը այդ եկածները ճանչցած չէ իբրեւ պաշտօնական հովիւ մը։ Ամենէն կարեւորը պուլկար կառավարութեան համաձայնութիւնը առնելն է. ուստի մենք ամենէն նպատակայարմարը կը գտնենք որ Պուլկարիոյ բոլոր հայաբնակ քաղաքները իրենց եկեղեցիներու շրջափակերուն մէջ միթինգներ սարգեն և իրենց թաղական խորհուրդներէն պահանջեն լրջութեամբ կառավարութեան բացատրելով մեր ազգային գործերու անկերպարան և անկանոն վիճակը անկէ խնդրեն որ արեւելութիւն տուի մեզ կաթողիկոսի հովանաւորութեան տակ անցնիլ, ու էջմիածնէն առաջնորդ մը խնդրել.. Ու այդպէսով, փոխանակ կաթողիկոսէն սպասելու, զանազան բարդ դիւանագիտական խնդիրներու մէջ մտնալու մենք ինքներս խնդրած կրլլանք մեր կառավարով եւս արտայայտել եմ Կովկասան սոցիալ դեմոկրատների վերաբերմամբ. եւ միայն անբարեխիղճ մանեւվրիստը չի կարող համոզել որ համակրելով սոցիալ դեմոկրատներին ես չեմ բաժանել որոշ դէպքերում նրանց հայեացքները եւ տակտիկան Բազմաթիւ դէպքերում ես բաժանել եմ Պլեխանովի հայեացքները. որոնց դէմ են եղել ռուսական սոցիալ դեմոկրատների աւելի ծայրայեղները եւ բլանկիստական հովերով բռնուածները. եւ եթէ այնու ամենայնիւ ես ինձ օրթոդոքս սոցիալ դեմոկրատ չեմ համարում եւ աւելի մօտ. եմ լեվ/զիոնիստներին (Բեռնշտէյնիզմին) դրա պատճառը պարզ է. իբրեւ էվոլիւցիոնիստ ես չեմ կարող բնութեան մէջ, որի մի մասն է եւ մարդկութիւնը, ընդունել յանկարծակի կատաստրոֆների թէորիան. յեղափոխութիւնը, ինչպէս ծնունդը, ինչպէս երկրաշարժը, էվոլիւցիոնական պրոցեսների վերջին ակտն է եւ արհեստական միջոցներով ապուշութիւն է առաջ բերել յեղափոխութիւն։ Իբրեւ գիտական մեթոդի ջատագով ես չեմ կարող ոեւէ դոգմատիզմ ընդունել։ Իբրեւ արդա

նում որ «բոլոր ժողովուրդները մի շաբլոնով են ազատուում», եւ պէտք է իսկոյն եւ եթ դիմել հայդուկային եւ տերորիստական գործողութիւնների։ Պարզ է թէ ես ո՞ր հոսանքի կողմն էի. 1892 թուականի ամառը կայացաւ դաշնակցականների առաջին ընդհանուր ժողովը։ Երկու հոսանքները բաղխեցան։ Վերջ դրեց կենտրոնացման, մշակեց ապակենտրոնացում, ծրագիր մշակեց «բիւրոկրատիա հիմնեց, կպցրուեց եւ «սոսիալիզ»մ խօսքը, որի դէմ էի ես, գտնելով որ թիւրքական լեժիմի դէմ քաղաքական կուռում սոցիալիստական գործունէութիւն չկայ։ Ցաղթող հանդիսացաւ ազգրեսիւ քաղաքականութեան հոսանքը։ 1892 թուականից յետոյ ես հեռացայ այդ կազմակերպութիւնից, դեռ պահպանելով ընկերական կապեր մի քանի գործիչների հետ։ Դաշնակցութեան նախկին իդէալիստ վետերանները, եւ ոչ այլասերած արդի դաշնակցականները –որոնք ընդունելով «միջոցների անխտրականութիւնը» դառան ատելի բռնակալներ հայ ժողովրդի համար պէտք է որ յիշեն այդ բոլորը։ 1896 թուականին առիթ ունեցայ մերնումում, հայկական ջարդերից յետոյ, տեսնել եւ «բիւրոն»։ Թէ ինչ տպաւորութեան տակ ես հեռացայ այդ քուազի—ազակեդրոնացման արգաւիք «բիւրոյից—դրան ապացոյց կը լինէր այն երկար նամակը, որ ես գրեցի Մոսկուայից Թ. գումարուած ընդհ. ժողովում կարդացուելու նպատակով. սակայն չէֆերը չեին բարեհաճել այդ անելու, որովհետեւ չափազանց խիստ քննադատութեան էին ենթարկուած բիւրոի տակտիկան եւ սիստէմը. Գուցէ արժանի համարած լինէին պահել այդ զրուցիւնը Դ. արխիւում... հետաքրքրական յուշերի մի գոկումենտ կը լինէր անշուշտ։ Սակայն նեղ, անհամբերող ոգով տոգորուած խմբակը հապա թէ այդպիսի մեծ պատի արժանացրած լինի իրան դատափետող գրութեան։ Այնուհետեւ իմ վերաբերմունքը դէպի Դաշնակցութիւնը եղել է միմիայն բացասական – քննադատական, իսկ երբ նա ոտքով գլխով ընկղմուեց «միջոցների անխտրականութեան» մէջ՝ ես այդ նոր կուրսի Դաշնակցութիւնը համարել եմ չեղած իր բուն նպատակից եւ չարիք մեր ժողովրդի առաջդիմութեան գործում

բութենէն որ մեզի թոյլ տայ մեր մայր աթոռին կրօնական հոկողութեանը տակ գտնուինք անշուշտ եթէ պուլկար կառավարութիւնը տրամադիր է մեզի զոհացում տալու, աւելի զոհ պիտի մնայ որ իր հպատակները, կամ իր հովանիին տակ ապրող հայերը իրենց կրօնական և դպրոցական գործերը առողջ հիմերու վրայ դնելու համար իր բարեացակամ միջամտութիւնը և արտօնութիւնը կը խնդրեն.

Ռաշիտ և «Ռազմիկի» խմբագրութիւնը լուսնակի վրայ կապրին եղեր, ինչպէս կերեւի. երբ չեն գիտեր թէ իրենց մէջ հանած խնդիրը շատ հին է. աշխատուած է, իսկ իրենց առաջարկած միջոցները անգործնական և կը սրտնեղին որ մենք իբր թէ կենդանի եղած չենք մեր գործերը կարգի բերելու համար երբ Կովկասը մեռելութեան մէջ էր. Ոչ, մենք ոչ միայն մեզի այլ և ուրիշ տեղերու հայերու համար աշխատած ենք. Պուլկարիոյ հայութիւնն էր որ շնորհիւ «Շարժումի» եռանդուն բրօբականդի պատգամաւոր դրրկեց Լահէի ժողովին. ամբողջ հայութեան ցաւերը ներկայացնելու համար. Պուլկարիոյ հայութիւնն էր որ նոյն «Շարժումի» շնորհիւ Օրմանեանի յիշելը դադրեցուց ամբողջ արտասահմանի մէջ. ինչ կընէր այսօր կենդանի եռուն կովկասը այդ պատմական բոպէներուն մէջ և անոր մամուլը.

«Շարժումի» շնորհիւ էր որ Պուլկարիոյ հայութիւնը տաճկահայ ամենափայլուն episkopոս ներէն մին իրեն համար առաջնորդ ընտրեց, բայց Սուլթանը չը թողուց որ գայ Ռաշիտ և Զարդարեան, թէ՛ Պուլկարիոյ հայութիւնը և թէ՛ մամուլը իր պարտականութիւնը կատարած են և դուք Պուլկարիոյ մէջ նոր դասագլուխ հիմնելու յաւակնութենէն ազատ կացուցէք ձեզ.... և մի մոռցէք որ փչերէն մաքրած ճամբու մէջ է որ սկսաք քալել.....

ՎԱՌՆԱՑԻ ՄԸ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նախարարապետ պ. Բեթրով վերադարձաւ Իշխանի քովէն. դահլիճի հրաժարման խնդիր չը կայ. Իշխանը ըստ երեւոյթին զոհ է դահլիճի վարած քաղաքականութենէն. Իշխանը չուտով Սոֆիա կսպասուի.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Օգոստոս 24 ին Պոլսէն կը հեռագրեն հետեւեալը—կառավարական շրջանակներու մէջ սկսած է մեկմ տրամադրութիւն տիրել դէպի Պուլկարիան, ու այժմ կարելութիւն կը տեսնուի բարեկամական համաձայնութիւն կայացնել թէ սահմանագլխուն վրայ տեղի ունեցած միջադէպերու և թէ ուրիշ առկախ մնացած խնդիրներու մասին.

ՄԱԿԵԴՈՆԻԱ

23 Օգոստոսին Պարիզէն «Բոլ. Գօրէս.» թերթին կը հեռագրեն թէ՝ ֆրանսական կառավարութիւնը ոչինչ գիտէ Անգլիոյ Մակեդոնիոյ ինքնավարութեան համար կազմած ծրագրի մասին. Այդ պատճառով Ֆրանսա իվի ճակի չէ այդ խնդրի վերաբերմամբ որոշ գիրք բռնել.

ՌՈՒՍԻԱ

Օգոստոս 24 ին Ռեթերսպուրկէն Պէրլին կը հեռագրեն թէ Ցարի ցանկութեամբ նախարարապետ Ստոլիպին իր մասնաւոր Ատենադպրին յանձնարարած է ոստիկանական նախարարութիւն մը ստեղծելու ծրագիր կազմել.

— Օգոստոս 23 ին Մոսկուայի ոստիկանութիւնը խուզարկութիւն կատարած է 3 ուսանողներու բնակարաններու մէջ և գտեր է փամփուշտներ, ատրճանակներ և երեք ռումբեր.

— Դրաշարները մերժած են շարել յետադիմական «Վէչէ» թերթը.

— Օգոստոս 22 ին կը հեռագրեն թէ Մոսկուայի մէջ ձերբակալուած է սոսիալ տեմոկրատներու կ. կոմիտէն.

Մոսկուայի ոստիկանապետութեան դէմ անյաջող փորձ մը տեղի ունեցեր է.

— Յեղափոխական ընկերակցականները պաշտօնապէս կը յայտարարեն թէ զօրավար Մին սպաննուած է իրենց կարգադրութեամբ.

ԱԶԴԵՐ

Ազգ. երկրեռ վարժարանաց և Մանկապարտէզի աշակերտներուն մէջ արձանագրութիւնք պիտի կատարուին ամսոյս 20 էն սկսեալ մինչեւ Սեպտեմբեր 3, ամէն առաւօտ ժամը 8 –12. Ազգ. խորհրդարանին մէջ.

Ծնողք կամ պաշտպանք կը հրաւիրուին ստանալու իրենց զաւակաց մտից արտօնագիրը՝ նշանակեալ ժամանակամիջոցին մէջ.

Դասախօսութիւնք կանոնաւորապէս պիտի սկսին Սեպտեմբեր 4 ին.

Հոգաբարձութիւն
Ազգ. երկրեռ վարժարանաց
Վառնա, 18 Օգոստ. 1906

Աղջկանց կրթարանն իր ասան եմէկերրորդ տարեշրջանը կսկսի յառաջիկայ Սեպտ. 1 ին, ուրբաթ օրը.

Աշակերտաց ընդունելութեան մասին ծնողք կրնան բանակցիլ ամէն առաւօտ ժամը 9—12.

Տնօրէն
«Աղջկանց Կրթարանի»
Պ. ՃԻՑԼԻՐՃԵԱՆ

21 Օգոստ. 1906
Վառնա

«ՀՍՑԿԱՋԵԱՆ ԿՐԹԱՐԱՆ»ը իր 8–րդ. (ութերորդ) տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 7 ին (Տինդշաբթի) առտուան ժամը 9–ին.

Դպրոցի համար այս տարուան մեր ընտրած շէնքը առաջինները կը գերազանցէ ամէն կերպով. Մանաւանդ՝ գիշերօթիկներու բնակութեան համար ամէն կարգադրութիւն եղած է քանզի այդ նպատակին համար կառուցուած շէնք մը է.

Գիշերօթիկներու համար ծնողք կամ ուրիշներ կրնան մեր հասցէին դիմել այսպէս—Բասթէօր Եարտըմեան Ֆիլիբօբլը (Պուլկարիա) Հիմնադիր–տնօրէն

Հ. Ե. Եարտըմեան

Ֆիլիպէ, 21 Օգոստ. 906

բութիւնը ամէն բանից գեր ի վերոյ համարող ես չեմ կարող կոյր հետեւող լինել այս կամ այն ազանդի շահերին. Հետեւաբար, Մարքսի անսխալականութիւնը, ինչպէս եւ ամէն անսխալականութիւն արտուրդ է ինձ համար. պրոլետարիատի բռնապետութիւն, դիկտատուրա. ինչպէս եւ ամեն մի բռնութիւն, դէմ է իմ համոզմունքներին. Ես չեմ հաւատում թէ դասակարգերի մէջ սերմանած թշնամութիւնները ատելութիւնը օգնում է սոցիալական խնդրի աջող լուծման. Դասակարգային կռիւը գոյութիւն ունի, սակայն այդ կռիւը պէտք է կուլտուրական միջոցներով առաջ տանել. օրէնսդրութեան, հասարակութեան հիմնարկութիւնների լայն դեմոկրատիզացիայի, քաղաքացիական ազատութեան կիրառմամբ եւ ոչ անհատների դէմ բռնի միջոցներով, ատելութիւն եւ թշնամութիւն սերմանելով. երբեւ տարական բեռլազեօզութիւններ կատարելով! Խաղաղ կուլտուրական զարգացումը ինքը արդէն մի հզօր գործօն է սոցիալական կարգերի առտիճանական յեղափոխութեան մէջ.

Սոցիալիզմը իբրեւ մի աշխարհայեացք, մի փիլիսոփայութիւն ունի բազմաթիւ նրբերանգութիւններ, նիւանսներ. Որպէսզի մեր ընթերցողները գիտակցաբար վերաբերվեն դէպս այդ հզօր հոսանքը. ես, տպելով մեր աշխատակից Բ. Իշխանեանին «Կ. Մարքս եւ Մարքսիզմ» ընդարձակ գրուածքը ասել էի որ պէտք է տամ եւ Բերնշտէյնի քննադատութիւնը.

Պարզ է որ ես կուրօրէն հպատակուել չեմ եւ իմ ընդհանուր աշխարհայեացքիս, ընդհանուր ուղղութեանս մասին. միայն կարող է իսկ լինել, իսկ այս կամ այն հարցի մանրամասնութիւնները պարզելիս ինձ աւելի լետաքրքրում է մերձաւոր էտապը, քան հեռու ապագայի մասին վերացական ծրագիրները եւ ֆանտազիաները. Ագրարային հարցի մասին, օրինակ, ես համակարծիք եմ ժողովրդական ազատութեան մշակած ծրագրին. Անշուշտ կապիտալիստական կարգերը պէտք է տեղի տան սոցիալիստական կարգերին. դա մարդկային առաջդիմութեան հասունացած էտապն է Իսկ թէ ապայայում այդ սոցիալիստական հասարակութիւնը ինչ հնարներ կը գտնի նոր պայմաններում աւելի եւս կատարելագործելու մարդկանց յարաբերութիւնները՝ դա այժմ բոմանների եի ֆանտազիաների աշխարհ է, իւկ ներկայումս «Մուրճը» պնաք է տարածի մեր մէջ գիտական սոցիալիզմի հիմքերը.

Վերջացնում եմ իմ ասելիքս նոյն խօսքերով, որ տսել եմ իմ առաջին "Բլօ դօմա սիւա" գրուածքում (1905 թ. նօ 11—12)

«Մեզ համար միակ հեղինակութիւնը՝ գիտութիւնը կանգ չի առնում եւ առաջ է ընթանում, իր յաղթական գնացքի տակ խորտակելով ամէն տեսակի նախապաշարմունքներ եւ քարացած հայեացքներ Մեզ ոգեւորող միակ զգացմունքը արդարութիւնն է, որով համակուել են արդէն առաջաւոր մարդկութեան մասսաները. Մենք հաւատում ենք որ մարդկային հանճարն ու կորովը դուրս կը բերեն դեռ դասակարգային եւ ազգային լարիւրինթոսում դեգերող մարդկութիւնը մի նոր լաւագոյն աշխարհ.

Իսկ եթէ ուզում էք իմանալ թէ այնուամենայնիւ դէպի ո՞ր քաղաքական կուսակցութիւնն է իմ համակրանքը—պարզ է որ դէպի գերմանական տիպի սոցիալ դեմոկրատիան եւ ոչ դէպի «անարխիստ-կոմմունիստները», որոնց նկատմամբ ա՛յնքան քնքշութիւն ցոյց տուին մեր դաշնակցական չէֆերը. տպելով նրանց հայոյանքները, սոցիալ դեմոկրատների մասին, թէեւ այդ բանում էլ մի ձեռքով արածը, միւսով ջնջում էին, Բագուի մէջ այլ վերաբերմունք արտայայտելով դէպի նոյն կոմմունիս անարխիստները. Բայց արդի դաշնակցական չէֆերի մէջ հետեւողականութիւն գտնել նշանակում է չը հասկնալ թէ ինչ բան է սուտը եւ եարալաշը դրանց գլուխներում եւ գործերում.

Լեւոն Սարգսեան

«Մուրճ»